ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 էլ. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.07.2016թ
288-1-ի

ՀՀ տարածքային կառավարման և
զարգացման նախարար
պարոն Դավիթ Լոքյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Լոքյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:
Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի վեցերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. 2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ քանի՞ համայնքում է ներդրվել Համայնքային միկրոհարցումների ծրագիրը:
2. Խնդրում ենք ներկայացնել գործընթացին առնչվող փաստաթղթերը՝ համայնքների հետ փոխհամաձայնության հուշագրեր, ավագանու որոշումներ կամ այլ:
3. Հանձնառությամբ նախատեսված 10 համայնքներում Ծրագրի ներդրման համար որքա՞ն գումար է նախատեսված և ի՞նչ միջոցներից /պետական բյուջե, դրամաշնորհներ կամ այլ/:
4. Որտե՞ղ են հրապարակվել SMS հարցումների բոլոր արդյունքները:
5. Խնդրում ենք ներկայացնել Հանձնառության ամբողջական իրականացման ընթացքում առաջացած խնդիրները, դրանց վերացմանն ուղղված քայլերը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Լիանա Դոյդոյան
ԻԱԿ նախագահ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔԻ ԹԻՎ 08/6495-16
« 07 » 07 2016 թ.